ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

ԵՂԻՇԵ ՄՈՎՍԵՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Եղիշե Մովսիսյանը ծնվել է 1899 թ. Վանում չքավոր ընտանիքում։ Նա անցել է կյանքի դժվարին ուղի, որը լի է եղել զրկանքներով, դառնություններով և անսահման դժվարություններով։ 1915 թ. գաղթել է Հայաստան և բնակվել Երևանում։ Փրկվելով սուլթանական յաթաղանի ճանկերից, Հայաստանի արևաշող երկնքի տակ նա ապաստան ու երջանկություն գտավ՝ հասնելով գիտության փառապանծ բարձրունքներին։

Միջնակարգը ավարտել է Երևանում, 1922 թ.։ 1922—26 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի ուսանողը և նրա երկրորդ շրջանավարտը։

1927 թ. անընդմեջ աշխատել է նաև պետական համալսարանի, ապա 1930 թ. Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոքիմիայի ամբիոնում՝ ասիստենտի, դոցենտի, գիտության դոկտորի և պրոֆեսորի, իսկ 1937 թ. մինչև իր կյանքի վերջը ագրոքիմիայի ամբիոնի վարիչի պաշտոններով։

1938 թ. գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, 1960 թ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր (1961 թ.), հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, հմուտ մանկավարժ ու գիտնական, որի գործունեությունը օրինակ է նրա հետևորդների համար։

Ե. Մ. Մովսիսյանը Հայաստանում գյուղատնտեսական կրթության և ագրոքիմիական գիտության հիմնադիր Պ. Բ. Քալանթարյանի երախտապարտ աշակերտներից էր և իր «Ագրոքիմիայի հիմունքները» ձեռնարկը նվիրել է նրա պայծառ հիշատակին։

Իր արժեքավոր հետազոտություններում գիտնականը լուսաբանեց մեր հանրապետության Արարատյան դաշտավայրի կարբոնատային հողերի կլանման ունակությունը և կլանված կատիոնների կազմությունը, կարբոնատների (Ca, Mg) խմբերը, մշակեց նրանց որոշման նոր մեթոդ, տվեց հումուսի որոշման կշռային և ծավալային եղանակները. որոշեց այդ հողերում ածխածնի և ազոտի հարաբերությունը և այլ հարցեր։

Ե. Մ. Մովսիսյանը 5 մենագրության, 65 գիտական հոդվածների և 25 գիտա-մասսայական գրքույկների հեղինակ է։ Կյանքի վերջին տարիներին նա աշխատում էր հողերի կլանման ունակության և կլանված կատիոնների կազմության որոշման ունիվերսալ մեթոդի մշակման վրա, սակայն այն չավարտեց։

Վերջին տարիներին նա կազմակերպեց և հասարակական հիմունքներով ղեկավարեց բույսերի սննդառության կանխորոշման (դիագնոստիկայի) պրոբլեմային լաբորատորիան։ Այդ լաբորատորիայում փորձարկեց դիագնոստիկայի հայտնի մեթոդները, հանձնարարականներ տվեց արտադրության մեջ կիրառելու և մշակեց նորերը՝ քիմիկո-ֆիզիոլոգիական և միկրո մեթոդները։ Բույսերի սննդառության կանխորոշման այս նոր մեթոդները հրատարակված

են։ Նա հրատարակության պատրաստեց «Պարարտացման փորձերի և կենսաբանական այլ հետազոտությունների մեթոդները ագրոքիմիայում» աշխատությունը, որը մեքենագիր վիճակում է։

Եղիշե Մովսիսյանը բազմաթիվ անգամներ մասնակցել է միութենական և հանրապետական գիտական նստաշրջանների, հանդես է եկել շրջաններում ու գյուղերում, մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ՝ երկրագործության քիմիացման վերաբերյալ զեկուցումներով և զրույցներով։ Ամենուրեք պրոպագանդել է հանքային և տեղական պարարտանյութերի կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման, գոմաղբամբարների կառուցման հարցերը։

Մեծ է Ե. Մ. Մովսիսյանի վաստակը գիտական և մանկավարժական կադրերի պատրաստման գործում։ Նա ղեկավարել է ասպիրանտների (14), որոնք հաջողությամբ պաշտպանել են դիսերտացիաներ։ Եղել է երեք գիտական խորհուրդների անդամ։ Ղեկավարել է գյուղատնտեսության մինիստրության գիտության գլխավոր վարչության գիտական խորհուրդի «Ագրոքիմիա-հողագիտություն» սեկցիան։ Նրա դաստիարակությամբ աճեցին ու բարձրացան գյուղատնտեսական գիտության և արտադրության բազմաթիվ ունակ և շնորհալի կադրեր։

Անգնահատելի է Ե. Մովսիսյանի վաստակը հատկապես Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում։ Նրա բազմաթիվ սաներն այժմ շարունակում են նրա աշխատանքները գիտության և արտադրության մեջ, առաջ են տանում նրա սիրած գործը, գյուղատնտեսության քիմիացումը։

Մեր հանրապետության երկրագործության քիմիացումը՝ մեծ գիտնականի և մանկավարժի հիշատակի հավերժացումը կլինի։